ԿԻԼԻԿՅԱՆ ՀԱՅՈՑ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԿՈՐՄԱՆՄԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋԸ

Ա. Գ. ԳԱԼՍՏՅԱՆ
Պատմական գիտությունների դոկտոր

Հայագիտության մեջ տիրապետում է այն տեսակետը, որ բացի Ռուբինյաններից և Հեթումյաններից, Կիլիկյան հայոց թագավորությունը կառավարել են նաև ֆրանսիական ծագումի Լուզինյան տոհմի ներկայացուցիչները։ Այս տեսակետը փորձել են հիմնավորել նրանով, որ իբր թե հայոց թագավոր Լևոն Դ Հեթումյանը 1342 թ., իր մահվանից առաջ, Կիլիկյան հայոց թագավորության գահը կտակել է Կիպրոսի թագավոր Ամորի Լուզինյանի որդի Գվիգոնին, որը մոր կողմից բարեկամական կապեր ուներ Հեթումյանների տոհմի հետ։ Այդ ժամանակից սկսած, իբր թե, Կիլիկյան հայոց թագավորությունը կառավարել են Կիպրոսի Լուզինյան տոհմից սերված հինգ լատին թագավորներ, որոնք մեկը մյուսին հաջորդելով, գահակալել են մինչև Լևոն Ե Լուզինյանի թագավորության վախճանը։

Այս տեսակետն իր արտահայտությունն է գտել որոշ գիտնականների ուսումնասիրություններում։ Առանձին գրքերում նույնիսկ, խոսվում է Կիլիկյան հայոց թագավորության մեջ տեղի ունեցած դինաստիական հեղաշրջման մասին[1]*։*

Հայագետ Գ. Միքայելյանը հանգամանորեն հետազոտելով Կիլիկյան հայոց թագավորության ընդհանուր պատմությունը, հատուկ ուսումնասիրության նյութ դարձրեց Լուզինյանների տոհմի և առանձին գործիչների գործունեությունը Կիլիկյան Հայաստանում։ Իր մենագրության[2] *մեջ տվյալ հարցերի վերաբերյալ նա բազմաթիվ սխալ մեկնաբանություններ ու հակասություններ նկատեց։ Փարիզում վերջերս անգլերեն հրապարակված Ռյուտ Քոլլենբերգի ծավալուն ուսումնասիրության մեջ*[3] *Լուզինյանների տոհմի ծագումը սկսվում է Լևոն Բ թագավորի դուստր Զաբելից, որը, ինչպես կտեսնենք, կատարյալ թյուրիմացություն է։*

Լուզինյանների թագավորության դինաստիայի գոյությունը Կիլիկյան հայոց թագավորության մեջ բացառված է։ Այն հորինել են արևմտա-եվրոպական և հատկապես կաթոլիկ պատմաբանները, որոնք դարեր շարունակ աշխատել են արմատավորել այն սխալ կարծիքը, թե Կիլիկյան հայոց թագավորությունը ոչ այլ ինչ է, քան Մերձավոր Արևելքում ստեղծված խաչակիր թագավորությունների բաղկացուցիչ մասը, որ Կիլիկիայի հայերը իրենց գոյության ու պետականության պահպանման համար պարտական են խաչակիր պետու-

---

1 *Տե՛ս «Հայ ժողովրդի պատմություն», Երևան, 1966, էջ 86։*

2 *Տե՛ս* Г. Г. Микаелян, История Киликийского армянского государства, Ереван, 1952, стр. 460–482.

3 *Տե՛ս* Rüdt-Collenberg, The Rupenides, Hethumides and Lusignans, Paris, 1963.

թյուններին և հատկապես Լուզինյանների տոհմից սերված լատին թագավորներին։

Լուզինյանների տոհմը հիմնել է Հյուգ IX Լուզինյանը 1192 թ., Կիպրոսում և որտեղ մնացել է ավելի քան երկուս ու կես դար՝ մինչև 1489 թ.։ Դրանից հետո Կիպրոսի Լուզինյանների թագավորությունը միացվել է Վենետիկի հանրապետությանը։

Հյուսիսային Ֆրանսիայի Պուատու գավառում IX—X դդ. ապրել է «Լուզինա» կոչված ֆրանկական ցեղերից մեկը, որի անունով էլ Կիպրոսում հիմնադրված այդ դինաստիան կոչվում էր «Լուզինիա» կամ «Լուզինյան»[4], հայկական ձևով Լուսինյան։ Այդ տոհմի ներկայացուցիչները Մերձավոր Արևելքում երևացել են խաչակրաց արշավանքներից շատ առաջ։ Այսպես օրինակ, Ռոբերտ Լուզինյանը 1062 թ. Պաղեստինում գլխավորում էր այն ասպետական ջոկատներն, որոնք ուղեկցում էին դեպի «սուրբ վայրերը» գնացող ուխտավորներին և պաշտպանում նրանց «անհավատների» հարձակումներից։ Խաչակրաց առաջին արշավանքի ժամանակ Ռոբերտ Լուզինյանն իր ջոկատով միացավ նրանց բանակներին։ Հյուգի որդի Գուիտոն Լուզինյանը խաչակրաց արշավանքներին ակտիվ մասնակցելու համար արժանացավ Երուսաղեմի թագավոր Բալդինի ուշադրությանը։ Վերջինս 1180 թ. Գուիտոն Լուզինյանին ամուսնացրեց իր քրոջ՝ Սիբիլի հետ։ Բալդինի մահից հետո, 1186 թ. Գուիտոն Լուզինյանը դարձավ Երուսաղեմի թագավոր։ 1189 թ. հուլիսի 4-ին Տիբերյադի հռչակավոր ճակատամարտում սուլթան Սալահ-էդ-դինի զորքերը պարտության մատնեցին խաչակիր բանակներին և գերելով Գուիտոն Լուզինյանին, զրավեցին Երուսաղեմը։ Անգլիական թագավոր Ռիչարդ Առյուծասրտի միջնորդությամբ Գուիտոն Լուզինյանն ազատվեց գերությունից։ 1192 թ. նա անգլիացիներից գնեց Կիպրոս կղզին և այնտեղ հիմնադրեց Լուզինյանների թագավորությունը։

Ինչպես տեսնում ենք, Լուզինյանների դինաստիայի հիմնադրումը Կիպրոսում կապված էր ոչ թե Հեթումյանների տոհմի հետ, ինչպես կարծում է Ռյուտ Վոլլենբերդը, այլ այդ դինաստիայի հիմնադիր, ֆրանսիական Պուատու տոհմից սերված ֆրանսիացի Գուիտոն Լուզինյանի հետ, որի մահից հետո Կիպրոսի թագավորությունը անցնում է նրա եղբորը՝ Հենրիկ Լուզինյանին, իսկ նրա մահից հետո Գուիտոնի որդի Ամորի Լուզինյանին։ 1293 թ. վերջինս ամուսնանում է հայոց Լևոն Բ Հեթումյանի դուստր՝ Զաբելի հետ, դրանով իսկ խնամիական կապ ստեղծում Կիպրոսի ֆրանսիական ծագումի Լուզինյանների և Հեթումյանների Կիլիկյան հայոց թագավորության միջև։

Ահա այս առնչությունն էր, որ օգտագործեցին Կիպրոսի խաչակիր Լուզինյանները և Հռոմի պապերը, որոնք ձգտում էին նվաճել Կիլիկյան հայոց թագավորությունը, այն միացնել Կիպրոսին, հայերին դարձնել կաթոլիկ, իսկ երկիրը հենակետի վերածել խաչակրաց նոր արշավանքներ կազմակերպելու և հարուստ Արևելքը կողոպտելու համար։ Այս քաղաքականության ջատագովները՝ կղերա-ֆեոդալական պատմաբաններն աշխատել են այն տպավորությունը ստեղծել, թե հայ պետականությունը գոյատևել է մինչև XIV դ. շնորհիվ այն բանի, որ Կիպրոսի խաչակիր Լուզինյանների տոհմից սերված թագավորները ապահովել են նրա դոյությունը։ Հեռանալով պատմական իրողությունից նը-

4 Ս. Մ. Դավիթ Բեկ, Լուզինեանք, Վիեննա, 1900, էջ 1—2։

բանք հորինում են Լուզինյաններից սերված հինգ լատին թագավորներ՝ Հյուգ, Հովհաննես, Լևոն (Ամորի որդի), Լևոն (Հյուգի որդի) և Լևոն Ե վերջին[5]։ Հինգ լատին թագավորների մասին է խոսում նաև ֆրանսիացի պատմաբան Դյուկանժը։ Դրանք են՝ Գվիդոն, Կոստան, Կոստանդին, Անանուն և Լևոն՝ վերջին թագավոր հայոց[6]։ Դյուլորիեն նույնպես հիշատակում է հինգ լատին թագավորների՝ Ջեհան, Կոստանդին, Գվիդոն (Կոստանդինի եղբայր), Բաղդինի որդի Կոստանդին, Կիպրոսի թագավոր Պետրոս Ա և Լևոն Ե[7]։

Բերված փաստերից ակներև է, որ թվարկած թագավորների անունները իրարից տարբերվում են։ Սակայն նրանք բոլորն էլ հինգերորդ թագավորին ճանաչում են Լևոն Ե-ին։ Հարց է ծագում ինչու՞ անպայման հինգ թագավորներ են հորինվել։ Որովհետև այդ հինգ թագավորների մասին վկայություն կա Լևոն Ե թագավորի տապանագրի վրա։ Այնտեղ ասված է. «Leon de Lusignan quint roy Latin du Royaume d'Armenie», այսինքն, «Լևոն Լուզինյան, հինգերորդ լատին արքա հայոց թագավորության»։ Այս տապանագրից ելնելով, վերոհիշյալ պատմաբանները աշխատել են հաստատել, որ Կիլիկյան հայոց թագավորությունը կառավարել են հինգ լատին թագավորներ, որոնցից վերջինը Լևոն Ե-ն է, որով և վերջացել է Կիլիկյան Հայաստանի պետականության պատմությունը։

Ալիշանը Լևոն Ե-ի վերաբերյալ բոլորովին այլ մոտեցում է դրսևորել։ Նա Լևոնին ներկայացնում է ոչ թե որպես հինգ լատին արքաներից մեկի, այլ Կիլիկյան Հայաստանում կառավարող հինգ Լևոն թագավորներից վերջինը[8]։ Կ. Եղյանը, ելնելով Ալիշանի սկզբունքից, Լևոն Ե-ի տապանագրի մեջ կատարեց, Բասմաջյանի խոսքերով, «հանճարեղ տողադարձություն»[9]։ Նա տապանագրի տեքստի մեջ ստորակետը տեղափոխեց «հինգ» բառից հետո և ստացվեց ոչ թե հինգ լատին թագավոններից մեկը, այլ «Լևոն Ե թագավոր հայոց»[10]։ Կ. Բասմաջյանը տապանագիրը ավելի ճիշտ վերծանելով, թարգմանեց այսպես՝ «Լևոն Ե Լուզինյան, հայկական թագավորության լատին թագավոր»[11]։ Գ. Միքայելյանը չհամաձայնելով Ղևոնդ Ալիշանի հետ, որը հայոց վերջին թագավոր Լևոնին համարում է Լևոն Ե, անվանում է նրան Լևոն Զ[12]։

Այսպիսով, հայ բանասերներն ու պատմաբանները բոլորովին նոր մեկնաբանություններ տվեցին տապանագրին. նրանք, հայացնելով Լևոնին, վերջինիս դարձրին Կիլիկյան հայոց թագավորությունը կառավարող հինգ կամ վեց Լևոնյաններից մեկը, առանց նրան կապելու Լուզինյան տոհմի հետ։ Սակայն չպարզեցին, թե արդյոք Կիլիկյան հայոց թագավորության մեջ եղե՞լ են Լու-

---

5 Տե՛ս Կ. Բասմաջյան, Լևոն Ե Լուզինյան վերջին թագավոր հայոց, Փարիզ, 1908, էջ 16։

6 Տե՛ս „Recueil Historient de Croisads", Documents armeniens, Paris, 1869, tome II, էջ 714։

7 Տե՛ս նույն տեղում, էջ 735։

8 Ղ. Ալիշան, «Ցուցակք հայրենեաց Հայոց», հ. երկրորդ, Վենետիկ, 1869, էջ 498։ Տե՛ս նաև Պալիենց, «Հայոց թագաւորների և իշխանների կարգը» («Մամեր ժամանակագրություններ XIII—XVIII դ.դ.»), կազմեց Վ. Ա. Հակոբյան, Երևան, հ. Բ, 1956, էջ 197։

9 Կ. Բասմաջյան, նշվ. աշխ., էջ 14։

10 Տե՛ս Հովհան Դարդել, ժամանակագրություն հայոց, Պետերբուրգ, 1891, Կ. Եղյանի ներածություն, էջ ԺԶ։

11 Կ. Բասմաջյան, նշվ. աշխ., էջ 14։

12 Տե՛ս Г. Микаелян, ук. соч., стр. 475.

դինյան տոհմից սերված լատին թագավորներ և եթե եղել են, ապա ովքե՞ր են դրանք և ե՞րբ են կառավարել հայոց թագավորությունը։ Նշենք, որ նախորդ չորս Լևոններից ոչ մեկը չի պատկանում Լուսինյանների տոհմին, իսկ Լևոն Ե-ն ոչ մի առնչություն չունի հայ ժողովրդի հետ. լինելով ֆրանսիացի, նա իր գործունեությամբ արտահայտել է կաթոլիկ կղերի քաղաքական իղձերն ու նպատակները։

Այժմ տեսնենք, թե ովքե՞ր են այն թագավորները, որոնց հիշատակում են Դյու-Կանժը, Դյուլորիեն և ուրիշները։

Վերը նշված թագավորներից Կիլիկիայում իշխել են միայն երկուսը՝ Գվիդոն և Լևոն Լուսինյանները։ Մյուս բոլոր թագավորները, որոնք իբր թե սերված են եղել Լուսինյանների տոհմից և թագավորել են Կիլիկյան Հայաստանում, հորինված են։ Նշված թագավորներից Գվիդոնի մեծ եղբայր Ջեհանը հայ պատմական գրականության մեջ հայտնի է մի քանի անուններով՝ «Կոստանդին Գ», «Ջոհաննիս», «Ջիվան—Հովհաննես», «Յովհաննէս» և այլն։ Նրա իսկական անունը Ջեհան է, սկզբնաղբյուրների մեջ ոչ մի տեղ չենք հանդիպում «Հովհաննես Լուսինյան» անվանը։ Ֆրանսիացի Ջեհանը ունիթորների (միաբարների) օգնությամբ Կիլիկիա եկավ ոչ թե որպես թագավոր, ինչպես գրում են Չամչյանը[13], Ալիշանը[14], Օրմանյանը[15], Աճառյանը[16] և ուրիշներ[17], այլ որպես հայոց զորքերի հրամանատար, Հովհան Դարդելի վկայությամբ՝ «զոր արար գունդստապլ Հայոց»[18]։ Այդ պաշտոնում նա մնաց, ինչպես վկայում է Հեթում Բ-ն, ընդամենը մեկ տարի։ Նրա «Տարեգրութիւն»-ում ասված է. «Պարոն Ջոհաննես...պայլ կացեալ ամ մի»[19]։ Այդ մեկ տարում նա իրեն դրսևորեց որպես «անպիտան և անարի... խռովարար և անարգու ազգին»[20]։ Այդ պատճառով էլ հայ ավագանին նրան սպանեց[21]։

«Թագավորներից» մյուսը՝ Պետրոս Ա-ն 1357 թ. հայերին օգնելու պատրվակով հարձակվեց արաբների վրա և նրանցից ետ վերցրեց Կոռիկոսը, բայց չվերադարձրեց հայերին, այլ միացրեց Կիպրոսի թագավորությանը։ Պետրոս Ա-ն ամեն առիթով աշխատում էր իրեն ներկայացնել որպես հայոց թագավոր[22]։ Նա հատել է տալիս արծաթե մի կեղծ դրամ, որի մի երեսին գրված է «Պետրոս թագաւոր ամենայն հայոց», իսկ մյուս երեսին՝ «շինեալ ի գաղաքն Սիս»։ Վիկտոր Լանգլուան հրապարակելով այդ կեղծ դրամը իր «Numismatique L'Arménie en moyen âge» (Paris, 1855, p. 49) աշխատության մեջ այն տպավորությունն է ստեղծել, իբր թե Պետրոս Ա-ն եղել է հայոց թագավոր։ Հայագետ Ի. Սիպիլյանը ապացուցել է այդ դրամի կեղծ լինելը[23]։

---

13 Մ. Չամչյան, Պատմութիւն Հայոց, Վենետիկ, 1785, հ. Գ, էջ 347։

14 Ղ. Ալիշան, Սիսուան, Վենետիկ, 1885, էջ 559

15 Մ. Օրմանյան, Ազգապատում, Կոստանդնուպոլիս, 1914, հ. Բ, էջ 1905։

16 Հ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, Երևան, 1944, հ. Բ, էջ 671։

17 «Մանր ժամանակագրություններ XIII—XVIII դդ.», կազմեց Վ. Ա. Հակոբյանը, Երևան, հ. Ա, 1951, էջ 101, ծան. 45։

18 Հ. Դարդել, ժամանակագրութիւն Հայոց, Պետերբուրգ, 1891, էջ 31։

19 Հեթում Բ, Տարեգրութիւն («Մանր ժամանակագրություններ XIII—XVII դդ.», հ. Ա, էջ 89)։

20 Մ. Չամչյան, նշվ. աշխ., էջ 347։

21 Հ. Աճառյան, նշվ. աշխ., էջ 59։

22 Հովհան Դարդել, էջ 59։

23 Հ. Սիպիլյան, Դասավորություն Ռուբինյանց, Վիեննա, 1892, էջ 69, տե՛ս նաև Կ. Բասմաջյան, նշվ. աշխ., էջ 39։

Հայտնի է, որ պատմա-քաղաքական և միջազգային որոշակի իրադարձությունների պայմաններում Ֆրանսիայի, Կիպրոսի թագավորության և պապի վարձկան զորքերի օգնությամբ Լուսինյանների տոհմի առանձին գործակալներ խցկվեցին հայոց արքունիքը։ XIII դ. երկրորդ կեսին հզորացած մահմեդական պետությունները վերջնականապես կործանեցին Մերձավոր Արևելքում ստեղծված խաչակիրների համարյա բոլոր թագավորություններն ու կոմսությունները։ Կիլիկյան հայոց թագավորությունը միակ պետությունն էր, որ շարունակեց պահպանել իր անկախությունը, անհավասար պայքար մղելով սիստեմատիկ հարձակումների ու ասպատակությունների, ինչպես նաև երկրի ներսում բուն դրած ունիթորների քայքայիչ գործունեության դեմ։ Հայ ավագանին բաժանվել էր երկու մասի՝ ունիթորների և հակաունիթորների, որոնց միջև տեղի ունեցող պայքարը հասել էր զինված ընդհարումների։ Այս պայքարում հաջողությունների հասան ունիթորները, որոնք գտնում էին, որ հայ ժողովուրդն ու նրա պետականությունը կարող էր փրկվել կործանումից միայն Հռոմի պապի և արևմտա-եվրոպական քրիստոնյա պետությունների օգնությամբ։ Ունիթորների հաջողություններն արքունիքում նշանակալից էին։ Նրանք կարողացան կաթոլիկ դարձնել հայոց Օշին թագավորին, որը ոչ միայն սկսեց հայերի մեջ կաթոլիկություն պրոպագանդել, այլև այն պարտադրել հրով ու սրով։ Օշին թագավորի խնդրանքով Կղեմենս պապը Կիլիկիա ուղարկեց լատին կրոնավորներ[24]։ Պապի պահանջով 1316 թ. Օշինը Ադանայում հրավիրեց նկեղեցական ժողով, որտեղ հայ ժողովրդի առջև խնդիր դրեց անհապաղ ընդունել կաթոլիկություն։ Նրանք, ովքեր հրաժարվեցին կատարել այդ պահանջը, աքսորվեցին երկրից։ Հրաժարվողների մեծ մասը գնաց Կիպրոս կղզին պատմիչի խոսքերով՝ «Բազումք անդէն մեռան»[25]։

Արևմտա-եվրոպական պետությունների ազդեցության այս հզորացումը մահմեդական պետությունների սիստեմատիկ հարձակումների պատճառը դարձավ, նրանք սկսեցին հաճախակի ասպատակել Կիլիկիայի քաղաքները։

Պայքարի այս եռուն պահին 1320 թ. վախճանվեց Օշին թագավորը՝ ժառանգ թողնելով իր անչափահաս որդուն՝ Լևոնին։ Ստեղծվեց խնամակալների խորհուրդ, որի մեջ մտնում էին Կոռիկոսի իշխան Օշին Պայլը, նրա եղբայր Կոստանդինը, Նղբի իշխան Հեթումը և վերջինիս եղբայր Բաղդինը։ Թագավորությունը իր ձեռքը վերցրեց Օշին Պայլը և սկսեց պայքար ծավալել արքունիքում արևմտա-եվրոպական ազդեցության դեմ՝ ձգտելով բարեկամական հարաբերությունների մեջ մտնել հզորացող Եգիպտոսի հետ։ Այդ նպատակով նս. 1323 թ. հայոց կաթողիկոս Կոստանդին Լամբրոնացուն ուղարկեց Եգիպտոս։ Կահիրեում 1323 թ. կնքվեց հայ-եգիպտական բարեկամության դաշնագիր։ Օշին Պայլի այդ նոր քաղաքականությունը հակաունիթորների հաղթանակն էր, որը մեծ զայրույթ առաջ բերեց Կիպրոսի և Ֆրանսիայի արքունիքներում և Հռոմի պապի աթոռանիստ քաղաքում։ Դրա դեմ պայքարելու համար Կիլիկիա ուղարկվեց Կիպրոսի Ամորի Լուսինյանի այրին՝ Զաբելը, որը թեև Լևոն Բ թագավորի դուստրն էր, բայց դաստիարակվելով կաթոլիկների մոտ, դարձել էր մոլեռանդ կաթոլիկ։ Նա փորձում է պետական հեղաշրջում կատարել, բայց չի հաջողվում և խռովության մասնակիցները խիստ պատժի են ենթարկվում։

---

[24] Մ. Զամչյան, նշվ. աշխ., էջ 313.

[25] Սամուել Անեցի. Հավաքմունք ի գրոց պատմագրաց, Վաղարշապատ, 1893, էջ 166։

Պարելը, որ Կիլիկիա էր եկել իր չորս որդիներով, երկուսի հետ բանտում մեռնում է, իսկ մյուս երկուսին՝ Ջեհանին և Բոհեմոնդին ունիթորները փախցնում են Հռոդոս կղզին։

Խռովությունը ճախողվելուց հետո ունիթորները Հռոմի պապի խորհրդով իրենց աղդեցությանն են ենթարկում Լևոն Դ թագավորին։ Նրանց հաջողվում է հարկադրել երիտասարդ թագավորին հրաման տալ գլխատելու Օշին Պայլին։ Դա ունիթորների խոշոր հաղթանակն էր։ Պատմիչը դառնությամբ նշում է, որ այդ ոճրագործությունը կատարվեց «ի սադրելոյ իշխանացն և ի քսու արաց՝ երբ խորհեալ են բառնալ զքեզ՝ և ինքեանք թագաւորեալ»[26]։ Ունիթորների դիրքը դրանից հետո արքունիքում ավելի ուժեղացավ[27]։

Հետագայում երիտասարդ թագավոր Լևոն Դ-ն զգաց իր սխալը, համոզվեց, որ Օշին Պայլի արտաքին քաղաքականությունը արտահայտում էր հայոց թագավորության քաղաքական շահերը։ Նա Եգիպտոսի սուլթան Մելիք Նասերի հետ սկսեց վարել գաղտնի բանակցություններ, որի ընթացքում համաձայնվեց ոչ մի կապ չպահպանել Հռոմի պապերի և արևմտա-եվրոպական պետությունների հետ։ Այս հողի վրա սկսվեց նոր պայքար ունիթորների և թագավորի համախոհների միջև։ Հետևանքն այն եղավ, որ Լևոն Դ-ն ոչ թե մեռավ[28], այլ սպանվեց[29], «ի սադրելոյ իշխանաց ոմանց լատինացւոց[30]», որովհետև նա պայմանագիր էր կնքել եգիպտացիների հետ[31]։

Լևոն Դ թագավորին սպանելուց հետո, պապի խորհրդով ունիթորները որպես նոր թագավոր առաջ քաշեցին Ամորի Լուղինյանի որդի Ջեհանին՝ նրան հրավիրելով Կիպրոսից։ Գրավելով արքունիքում գունդստաբլի պաշտոնը, Ջեհանը սկսեց աղդեցիկ հայ իշխանների փոխարեն նշանակել յուրայիններին։ Նա լատին իշխան Բաղդինին նշանակեց մարաջախտի պաշտոնում, իշխան Բոհեմոնդին՝ սենեսկալի պաշտոնում և այլն։ Մի տարի հետո Ջեհանը իրեն դրսևորեց որպես «անարգու աղգին» և նրան ոչ միայն թագավոր չօծեցին, այլև սպանեցին։

Ունիթորներին հաջողվեց այս անգամ Կիպրոսից հրավիրել Ջեհանի եղբորը՝ Գվիդոնին, որին պատմական գրականության մեջ անվանում են «Կի»[32], «Կիտ»[33], «Գուիտ»[34], «Գուիտոն»[35] (հայկական ձևով Գվիդոն)։ Բրիտանական թանգարանում Մեսրոպ Մագիստրոսի հայտնաբերած մի հիշատակարանում կա Հեթում Ախտունցու ինքնագիրը, որտեղ հեղինակը Գվիդոնին կոչում է «Կի թագավորն հայոց»[36]։ Ինքը՝ Գվիդոնը նույնպես իրեն «Կի» էր անվանում։ Այդ է ապացուցում մեզ հասած մի հատիկ արծաթե դրամը, որտեղ կարդում ենք «Կի թագավոր հայոց»[37]։ Բասմաջյանի խոսքերով՝ նա «Կի» կգործածէր արհա-

26 Նույն տեղում, էջ 158։

27 Г. Микаелян, ук. соч., стр. 457.

28 Հովհան Դարձել, էջ 32։

29 «Մանր ժամանակագրություններ», հ. Ա, էջ 89։

30 Մ. Ջամչյան, նշվ. աշխ., հ. Գ, էջ 333։

31 Տե՛ս Г. Микаелян, ук. соч., стр. 457

32 Հ. Սիպիլյան, նշվ. աշխ., էջ 83։

33 «Մանր ժամանակագրություններ», հ. Ա, էջ 89։

34 Հովհան Դարձել, էջ 83։

35 Մ. Ջամչյան, նշվ. աշխ., էջ 348։

36 ՀՍՍՀ Գիտությունների ակադեմիայի պատմության ինստիտուտի արխիվ, գործ 34, թուղթ № 6479, էջ 117։

37 Հ. Սիպիլյան, նշվ. աշխ., էջ 83։

մարհելու համար հայերը[38]։ Այդ արկածախնդիր հայոց թագավոր առաջադրվեց նրա համար միայն, որ մոլեռանդ կաթոլիկ էր, Հովհան Դարդելու խոսքերով՝ «էր այր արդարև կաթողիկեայ և հնազանդ մօր մերում սրբոյ եկեղեցւոյ Հռոմայ»[39]։

Գվիդոն Լուզինյանը Կիլիկիա եկավ զինված ջոկատների ուղեկցությամբ, Հովհան Դարդելու վկայությամբ՝ «զամենայն ֆրանգս»[40]։ Ըստ Հովհան Դարդելու, Լևոն Դ թագավորը դեռ կենդանության ժամանակ իբր թե հայոց գահը կտակել էր Գվիդոնին, դրա համար էլ հայ ավագանին նրան մայրաքաղաքում ընդունեց «շքեղաշուք հանդիսիւ»[41] և 1342 թ. հոկտեմբերի 15-ին օծվեց հայոց թագավոր։ Թագավոր օծվելուց անմիջապես հետո պապի գործակալը ասպետ Գրեգուրարի և վանական Անտուանի միջոցով հաղորդեց պապ Կղեմեոս VI-ին, թե այժմ հնարավորություն ունի կատարելու պապի առաջադրած բոլոր խնդիրները։ Նա հայոց արքունիքը հեղեղեց իր կիպրացի հայրենակիցներով և կինակիցներով, արգելեց հայոց լեզուն արքունիքում, պաշտոնական լեզուն հանաչելով միայն լատիներենը։ Սակայն, ինչպես նշում է Վիկտոր Լանգլուան, թեև Գվիդոն Լուզինյանը հայոց լեզուն իսպառ վերացրեց արքունիքից, բայց նրան չհաջողվեց կաթոլիկությունը ստիպողաբար տարածել հայերի մեջ[42]։

Գվիդոն Լուզինյանի և նրա համախոհների արտաքին քաղաքականությունը հայ ժողովրդի համար աղետալի հետևանքներ ունեցավ։ Մահմեդական պետությունները տեսնելով, որ հայոց թագավորությունը անցել է Կիպրոսի Լուզինյանների ձեռքը և կարող է հանգրվան դառնալ նոր խաչակրաց արշավանքների համար, սկսեցին ներխուժել Կիլիկիա և ավերել երկիրը։ Նրանք դրավեցին մայրաքաղաք Սիսը, կողոպտեցին, տարան մեծ թվով գերիներ։ 1343 թ. սեպտեմբերին Հալեպի սուլթանական զորքերը[43] ներխուժեցին Կիլիկիա, իսկ եգիպտական մի մեծ բանակ գրավեց Ադանան[44]։

Հայ ավագանին ապստամբեց թագավորի դեմ։ 1344 թ. նոյեմբերի 17-ին[45] ապստամբները Ադանայում բռնեցին Գվիդոն Լուզինյանին և սպանեցին[46]։

Գվիդոն Լուզինյանի սպանությունը մեծ հուզմունք առաջ բերեց պապական շրջանում։ Նրանք դառնությամբ ողբացին իրենց գործակալի կորուստը։ Հայերը, գրում է Հովհան Դարդելը. «սրախողխող արարեալ էին զարքայ իւ-

38 Կ. Բասմաջյան, էջ 20։ Անհրաժեշտ է նշել, որ չնայած ինքը Բասմաջյանը կաթոլիկ է, բայց տվյալ հարցի շուրջը նա հակառակ է կաթոլիկների տեսակետին։ Նա փաստերի ենշման տակ բազմաթիվ հակասություններ ու կնճռություններ է նկատում տվյալ հարցի շուրջը և քննադատում կաթոլիկ եկեղեցու ռեակցիոն դերը հայ ժողովրդի և նրա պետականության նկատմամբ։

39 Հովհան Դարդել, էջ 40։

40 Նույն տեղում։

41 Նույն տեղում, էջ 33։

42 Տե՛ս Langlois. Documents pour servir a l'Histoire de Lusignas („Revue Archeologique", Paris, 1859, tome XVII, p. 149).

43 Հայերը կաշառեցին Հալեպի սուլթանի զորքերի հրամանատարին, որը զորքերը դուրս բերեց Կիլիկիայից և երկիրը փրկեց ավերումից (տե՛ս «Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին», Երևան, 1965, էջ 249)։

44 Նույն տեղում։

45 Մ. Չամչյան, նշվ. աշխ., էջ 464։

46 Հ. Տեր Ղաղարյան, Հայկական Կիլիկիա, Տեղագրություն, Անթիլիաս—Լիբանան, 1966, էջ 282։

բևանց Դուի և դիշխանն Բոէմոնդ, ղեղբայր նորա և զամենայն փռանգս,»[47]։ Արույ Ֆեղայի ժամանակագրությունը շարունակող արաբ պատմիչը հաստատում է այդ վկայությունը գրելով. «Հայերը սպանեցին իրենց թագավոր Ֆրանկ Քոնդստարլին, որն անկարող էր վարել գործերը և չէր պաշտպանում երկիրը, որի հետևանքով մուսուլմանները ավերումներ էին կատարում»[48]։ Հովհան Դարդելը հիշատակն է գրում. նա նշում է, թե իբր Գվիդոնը «խիղախ բաջութեամբ մարտընչէր ընդ թշնամիս»[49], իսկ սպանության պատճառը բացատրում է նրանով, որ իբր թե Գվիդոնը «ստէպ-ստէպ վարէր ի պատերազմս։ Հայ ավագանին ոչնչացնում է ոչ միայն Գվիդոնին և նրա կողմնակիցներին, այլև իր հետ բերած վարձկան զորքերին, «զամենայն փռանգս, զոր ածեալ էր Նորա ընդ իւր ի Հայաստան»[50]։

Սա է Լուզինյան տոհմից սերված այն միակ թագավորն, որը Կիլիկյան Հայաստանում թագավորել է ընդամենը երկու տարի[51]։ Կիպրոսի թագավորության գարձակալ Գվիդոն Լուզինյանի այդ երկու տարվա թագավորությունը ոչ մի դեպքում չի կարելի դիտել որպես ինչ-որ դինաստիական կամ պետական «հեղաշրջում»։ Արկածախնդիր ասպետ և կաթոլիկների դրածո Գվիդոն Լուզինյանի թագավոր դառնալը հայ ժողովրդի պետականության պատմության մեջ պատահական բնույթ է կրում։ Նրանից առաջ, և, ինչպես կտեսնենք, նրանից հետո, կիլիկյան հայոց թագավորությունը կառավարել են Հեթումյան տոհմի ներկայացուցիչները։ Գվիդոն Լուզինյանին սպանելուց անմիջապես հետո հայ ավագանին, որպես նոր թագավոր առաջ քաշեց Նղրի ականավոր զորավար և Բարձրբերդի իշխան, ապստամբության ակտիվ մասնակից Կոստանդին Գ Հեթումյանին։ Որոշ պատմաբաններ նրան համարել են Լուզինյան տոհմից սերված և աշխատել նրա միջոցով կապ ստեղծել Գվիդոն Լուզինյանի և Լևոն Ե թագավորի միջև (օրինակ, Դյու-Կանժը նրան թվարկում է հինգ լատին թագավորների շարքում[52], նույն կարծիքին է նաև Դյուլորիեն[53]։

Այսպիսով, վճռական նշանակություն է ստանում այն հարցը, թե ո՞վ էր նորընտիր հայոց թագավոր Կոստանդին Գ-ն, հա՞յ էր արդյոք, թե՞ լատին։ Այս հարցի ճիշտ լուսաբանումը կարևոր է, առավել ևս, որ Կոստանդինը թագավորել է շուրջ 19 տարի (1344—1363), իսկ նրա մահից հետո գահը անցել է նրա որդուն՝ Լևոնին, որին հաջորդել է հորեղբոր տղան՝ Կոստանդին Դ-ն։

Ինքնըստինքյան պարզ է, որ եթե Լուզինյան տոհմի թշնամիները այս Կոստանդինին առաջ են քաշել որպես հայոց թագավոր, ուրեմն նա ևս թշնամի էր Լուզինյաններին։ Այդ կարևոր հանգամանքը հաստատվում է նրանով, որ Հովհան Դարդելը հիացմունքով է խոսում Գվիդոնի մասին, նշելով. «էր այր արդարև կաթողիկեայ և հնազանդ մօր մերում սրբոյ եկեղեցւոյ Հոռոմայ»[54], և ապա ճիշտ հակառակ վերաբերմունք ունի դեպի Կոստանդին Գ-ն, նրա մա-

---

47 Հովհան Դարդել, էջ 43։

48 Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին, էջ 249։

49 Հովհան Դարդել, էջ 49։

50 Նույն տեղում, էջ 43։

51 Մի հիշատակարանում ասված է «ՌՅԽԱ (1341) Կիտ եղբայր Յոհանիսի (թագավորել է) ամս Բ, զայս ընդ եղբօրն իւր հայերն սպանին» («Մանր ժամանակագրություններ», հ. Ա, էջ 89)։

52 Տե՛ս „Recueil Hist.", էջ 714։

53 Տե՛ս նույն տեղում, էջ 735։

54 Հովհան Դարդել, էջ 40։

սին ատելությամբ է խոսում՝ հանգամանք, որ նկատել է պրոֆ. Գ. Միքայելյանը։ Հովհան Դարդելն այնուհետև Կոստանդին Գ-ի մասին գրում է. «Զէր նա յարքունի զարմէ անտի Հայոց»[55]։ Դարդելի կարծիքով, նա բարեկամական կապ անգամ չուներ Լուզինյան տոհմի հետ[56]։ Հայերը, շարունակում է Դարդելը, թագավոր օծեցին Կոստանդինին, «որ էր բռնաւոր և ոչ սերեալ յարքական ազգէ»։ Սևացնելով Կոստանդինին, Դարդելը նրա մասին գրում է. «Կոչել գնա բռնակալ, քան թագաւոր»[57], «տաղտուկ էր»[58]։ Դարդելի այս վերաբերմունքի պատճառն այն է, որ Կոստանդին Գ թագավորը, նրա խոսքերով ասած, դաշինք էր կնքել «ընդ սուլթանին Բաբելոնի»[59]։

Պապի գործակալ Հովհան Դարդելի այս բացասական գնահատականները ցույց են տալիս, նախ, որ Կոստանդին Գ-ն լատին լինել չէր կարող, որ նրան թագավոր էին առաջադրել հայ պետական այն գործիչները, որոնք թշնամաբար էին տրամադրված դեպի Լուզինյանները[60], և ապա այն, որ Կոստանդին թագավորը իր երկրի շահերից ելնելով խաղաղության դաշն էր կնքել հարևան մահմեդական պետությունների հետ։

Կոստանդին Գ թագավորի մասին Չամչյանը գրում է. «Ոմանք ասեն լինել որդի Հեթմոյ ուրումն իշխանի»[61]։ Սակայն Չամչյանի նշած Կոստանդինը ուրիշ անձնավորություն է, որն Նղրի իշխան Հեթում սենասկալի որդի Կոստանդինն էր։ Նա հաջորդեց իր հորեղբոր որդուն Կոստանդին Գ-ին[62] և որը Նղրի ու Բարձրբերդի իշխան Բաղդին Հեթումյանի որդին էր։ Կոստանդին Գ-ի ձեռքով գրած և մեզ հասած մի հիշատակարանում ասված է. «Հայրն իմոյ տէր Բաղդին Մարաշախտն էր»[63], որն եղել է Լևոն Գ Հեթումյան պատանի թագավորի խնամակալը։ Կոստանդին Գ թագավորի մասին կա ևս մի վկայություն, որ պահվում է Երուսաղեմում Ս. Հակոբյանց վանքի մատենադարանում, որտեղ ասված է. «Եւ մեռաւ Կոստանդին թագաւոր եւ թագաւորէ միւս Կոստանդին, որդի պարոն Հեթմոյ»[64]։ Իրոք, Կոստանդին Դ-ն, որը թագավորել է 1365-1373 թթ., եղել է Նղրի իշխան Հեթում Պայլի որդին, այսինքն Կոստանդին Գ թագավորի հորեղբոր տղան։

Հայ մատենագիրների մոտ պահպանված են նաև այլ տեղեկություններ, որոնք ցույց են տալիս, որ իրոք Կոստանդին Գ թագավորը հայ է և Հեթումյան տոհմից սերված թագավորներից մեկը։ Այսպես օրինակ, Հեթում Բ տարեգրի վկայությամբ Կոստանդին Գ-ն եղել է «ազգական Լեոնի»[65]։ Կիլիկյան Հայաստանում թագավորել են մի քանի Լևոններ։ Հարց է առաջ գալիս, այստեղ ո՞ր Լևոնի մասին է խոսքը։ Այս հարցը պարզում է Ներսես Պալիենցը, որը հայ ունիթորների պարագլուխն էր և պապերի գործակալը, Կոնստանդին Գ թագա-

55 Հովհան Դարդել, էջ 58։
56 Նույն տեղում, էջ 52։
57 Նույն տեղում։
58 Նույն տեղում, էջ 53։
59 Նույն տեղում, էջ 52։
60 Г. Микаелян, ук. соч., стр. 462.
61 Մ. Չամչյան, նշվ. աշխ., էջ 349։
62 Տ'ես Rüdt-Collenberg, Ibid, p. 48.
63 Տե՛ս „Recueil Hist.", t. II, p. 714.
64 «Ժամանակագրութիւն» (XI—XVII դդ.), տպագրության պատրաստեց Նորայր եպս. Պողոսյան (Երուսաղեմ), «Բանբեր Մատենադարանի», №9, Երևան, 1969, էջ 265։
65 «Մանր ժամանակագրություններ», հ. Ա, էջ 89,

վորի մասին նա գրում է. «Կոստանդին աղգական Լևոնի, կայ այժմ [1351], թագաւորէ ամս է (7)»[66], այսինքն՝ 1351 թ. Կոստանդինը 7-րդ տարին էր, ինչ թագավորում էր Կիլիկյան Հայաստանում։ Իրոք, երբ 1344 թ. սպանեցին Գվիդոն Լուզինյանին, Կոստանդինը դարձավ թագավոր։ 1344-ից մինչև 1351 թ անում է ուղիղ 7 տարի։ Ուրեմն Կոստանդին Գ-ն «աղգական է» Լևոն Դ Հեթումյան թագավորի, նա հայ պատմական դրականության մեջ համարվում է Հեթումյանների տիրապետության շրջանի վերջին թագավորն, որից հետո, իրը թե, հայոց գահը անցել է Լուզինյաններին։

Այսպիսով, Հեթում Բ տարեգիրը և Ներսես Պալիենցը հաստատում են, որ հայոց թագավոր Կոստանդին Գ-ն ոչ թե լատին է, սերված Լուզինյաններից, այլ հայ է, սերված Հեթումյանների տոհմից։ Կոստանդինի հայրը, ինչպես նշեցինք, Նղրի և Բարձրբերդի իշխան մարաջախտ Բաղդինն էր, իսկ մայրը Պապեռոնի իշխան Լևոնի դուստր Մարիամը կամ Մարոն էր՝ Սմբատ Սպարապետի թոռը։ Բերված փաստերը համոզիչ կերպով ապացուցում են, որ իրոք, Կոստանդին Գ թագավորը Հեթումյան տոհմի ակնավոր գործիչներից մեկն էր և ոչ մի կապ չուներ Լուզինյանների հետ։ Պատահական չէ, որ հայոց արքունիքը մաքրելով լատինասեր պալատականներից[67], Կոստանդին Գ-ն որպես իր թիկնապահ առաջ քաշեց հայ ակնավոր գորավար Լիպարիտին, որին նշանակեց հայոց թագավորության սպարապետ (1347 թ.)։ Չամչյանը այդ մասին գրում է. «Կարգեալ իւր սպարապետ ոմն Լիպարիտ անուն քաջ իշխան Հայոց»[68]։ Խոսքն այն Լիպարիտի մասին է, որին իրենց երկերում մեծարել են միջնադարի հայ հեղինակներից հատկապես Հովհաննես Թլկուրանցին։

Կոստանդինի մահից հետո իշխանությունն անցնում է նրա որդի Լևոնին (1363—1365 թթ.)[69], որին գահընկեց անելուց հետո թագավորեց դարձյալ Հեթումյան տոհմից Կոստանդին Դ-ն (1365—1373 թթ.)։ Հովհան Դարդելը այդ մասին գրում է. «Եդին Հայք զայլ ոմն թագաւոր, զորդին պարոն Հեթմոյ, որ կոչեցաւ Կոստանդին»[70]։ Այս Կոստանդինը Հեթում Ա թագավորի Եղբոր թոռն է, Սսեցի, Օշին Պայլի խնամակալներից մեկը։

Ինչպես տեսնում ենք, լատին թագավոր Գվիդոնից հետո մեկը մյուսին փոխարինում են Հեթումյաններից սերված հայ իշխանները։

Այժմ անդրադառնանք Լևոն Ե Լուզինյանին, որով ավարտած են համարում Լուզինյանների տոհմից սերված թագավորների տիրապետությունը Կիլիկիայում։

Լևոն Ե-ն ֆրանսիացի է։ Նա Ջեհան Լուզինյանի որդին է, մայրը՝ վրաց թագավոր Գրիգորի Բագրատունու դուստր Սոլթանը։ Երբ լատինամոլներին հաջողվում է սպանել Կոստանդին Դ-ին, նրանք դիմում են Հռոմի պապին՝ խնդրելով, որ Լևոնին ուղարկեն Կիլիկիա։ Հռոմի պապ Ուրբանոս V-ը ֆրանսիական թագավոր Կարլոս VI-ի համաձայնությամբ, որպես Կիլիկյան հայոց

---

66 «Մանր ժամանակագրություններ», հ. Բ, էջ 206։

67 Մ. Չամչյան, նշվ. աշխ., էջ 354։ Այս Կոստանդինի վերաբերյալ մի հիշատակարանում ասված է. «ի մերոյ մեծ արքային, որ Կոստանդին անուն ասին» (էջ 424)։ (Հ. Թոփչյան, «Ցուցակ ձեռագրաց Մարմաշի վանքին», Վենետիկ, 1962, էջ 424)։

68 Նույն տեղում, էջ 354։

69 Ղ. Ալիշան, Սիսուան, էջ 544։

70 Հովհան Դարդել, էջ 59։

թագավորության գահի թեկնածու առաջադրեց Լևոն Լուսինյանին։ Լևոնին Կիլիկիա ուղարկելու նախօրյակին Ուրբանոս V պապը հատուկ նամակով հայ իշխաններին խորհուրդ է տալիս Լևոնին օծել հայոց թագավոր, քանի որ նա «ազգական է Պետրոսի, հոյակապ թագաւորին Կիպրոսի»[71] և խոստանում է առատաձեռն օգնություն ցույց տալ հայոց թագավորությանը։

Լևոն Ե-ի վերաբերյալ բավական մանրամասն խոսում է Հովհան Դարդելը իր «Ժամանակագրութիւն հայոց» աշխատության մեջ՝ գրված Լևոնի թելադրությամբ և նվիրված հենց իր մեծարմանը։

Հովհան Դարդելը ֆրանսիացի վանական է։ «Սուրբ վայրերը» երկրպագելու համար նա եղել է Երուսաղեմում։ Ճանապարհին լսելով Լևոն Ե Լուսինյանի մասին, որը գտնվում էր Կահիրեում՝ գերության մեջ, որոշում է այցելել իր հայրենակցին։ Հանդիպման ընթացքում պարզ է դառնում այդ երկու մոլեռանդ կաթոլիկ ֆրանսիացիների հայացքների ընդհանրությունը։ Հովհան Դարդելը վերջինիս խնդրանքով մնում է Լևոնի մոտ, դառնում նրա խոստովանահայրը և խորհրդականը։ Դարդելուն հաջողվում է իսպանական թագավորի օգնությամբ գերությունից ազատել Լևոնին։ Հռոմի պապ Կղեմեոս VII 1383 թ. Լևոն Ե-ին հաջող ազատելու համար Դարդելին ձեռնադրեց եպիսկոպոս[72]։

Հարց է ծագում, թե արևմտա-եվրոպական պետություններն և Հռոմի պապը ի՞նչ նպատակով էին Լևոնին ազատում գերությունից։ Նրանց նպատակը ոչ թե հայկական պետականության վերականգնելն էր, ինչպես կարծում են ոմանք[73], այլ որ վերականգնեն Լևոնի իրավունքները, որպեսզի Կիլիկյան Հայաստանը միացնեն Կիպրոսի թագավորությանը և այն դարձնեն հենակետ Արևելքը նվաճելու համար։

Ինչպես հայտնի է XIV դ. երկրորդ կեսին Մերձավոր Արևելքում ու Եվրոպայում մի շարք խոշոր իրադարձություններ տեղի ունեցան։ Սկսվել էր հարյուրամյա պատերազմը Անգլիայի և Ֆրանսիայի միջև, որի հետևանքով երկրորդական պլանի վրա մղվեցին խաչակրաց նոր արշավանքների ծրագրերը։ 1373 թ. պատերազմ բռնկվեց Կիպրոսի թագավորության և Վենետիկի միջև, որի հետևանքով Կիպրոսի թագավորությունը չափազանց թուլացավ։ Նա հարկադրված եղավ Եգիպտոսի հետ հաշտություն կնքել՝ ծանր պայմաններով[74]։ Այդ իրադարձությունները նպաստեցին արաբական պետությունների աշխուժացմանը։ Կիլիկյան հայոց թագավորության հարցը պապականության, ինչպես նաև արևմտա-եվրոպական պետությունների համար դարձավ կարևոր խնդիրներից մեկը։ Ֆրանսիական թագավոր Ֆիլիպը գտնում էր, որ ֆրանսիացիները պարտավոր են օգնել հայոց թագավորությանը, որովհետև այն գտնվում է «Սուրբ երկիր» տանող ճանապարհին[75]։ Հայ ավագանուն հասցեագրված իր նամակում Ուրբանոս V պապը խորհուրդ էր տալիս Լևոնին ընտրել հայոց թագավոր, «զի խորհէր քահանայապետն ընդ արևմտեան թագաւորութիւնս վասն ազատելոյ զԵրուսաղէմ ի ձեռաց այլազգաց»[76]։

---

71 Նույն տեղում, էջ 84։

72 Կ. Բասմաջյան, նշվ. աշխ., էջ 26։

73 Տե՛ս Կ. Եղյանի ներածությունը Հովհան Դարդելի գրքում, էջ ԾԹ։

74 Տե՛ս „Recueil Hist.", tome II, էջ 714։

75 Տե՛ս Г. Микаелян, ук. соч., стр. 455.

76 Մ. Ջամջյան, նշվ. աշխ., էջ 355։

Եվրոպական թագավորներն ու պապերը ջանք էին թափում հայոց գահը հանձնել այնպիսի մի գործչի, որը թե՛ կրոնով, և թե՛ բաղաքական հանգամանքով հարաղատ լիներ։ Այսպիսի հարմար թեկնածու էր Լևոն Լուսինյանը, որն իր Ճառում շեշտում էր. «Զի մեք հնաղանդք եմք եկեղեցւոյն Հռոմայ և ունիմք զկաթողիկէ հաւատս, զոր պարտ է և ձեզ ունել. զի սերունդ մեր է ի Դաղղիոյ»[77]։

Լևոն Ե-ն իրեն համարում էր ֆրանսիացի, իսկ հավատով՝ կաթոլիկ. նա ոչ մի կապ չուներ ոչ հայ ժողովրդի, ոչ էլ հայոց թագավորության հետ։ Չնայած դրան, Հովհան Դարդելը Լևոնին ներկայացնում է որպես «օրինական ժառանգ» հայոց թագավորության, որին իբր թե «Հայք առ հասարակ և աղաչէին կապել ի գլուխ զթագն արքայական, զի ճանաչէին զնա բնիկ տէր իւրեանց՝ և ուղղակի ժառանգ թագաւորութեանն հայոց»[78]։

Ինքը իրեն հակասելով Դարդելը գրում է, որ Լևոնը գալիս էր պապի ուղերձը ձեռքին և ֆրանսիական զինված ջոկատների ուղեկցությամբ, այլև իր հետ բերելով կաթոլիկ եպիսկոպոս Ներբոնին, որպեսզի սա իրեն թագավոր օծեր կաթոլիկական կանոններով։ Նա իր հետ Հայաստան էր բերել նույնիսկ մեռոն[79]։ Լևոնի հեղինակությունը հայերի աչքում բարձրացնելու համար վաղորոք հատել են տալիս բաղմաթիվ արծաթյա և պղնձյա անարվեստ դրամներ։

Լևոն Լուսինյանը Կիպրոսից Հայաստան եկավ 1374 թ. հուլիսին, բայց թագավոր օծվեց սեպտեմբերի 14-ին։ Հարց է առաջանում՝ ի՞նչ էր անում նա ավելի քան երկու ամիս Կիլիկիայում, ինչու՞ նա անմիջապես չօծվեց հայոց թագավոր։ Պարզվում է, որ նա ցանկանում էր օծվել հայոց թագավոր ոչ թե հայկական, այլ լատինական ծիսակատարությամբ։

Նորընտիր Լևոն թագավորը իրեն մերկացրեց հայ ավագանու աչքում ոչ միայն նրանով, որ իր հետ բերել էր լատին եպիսկոպոս և օծվել լատինական կանոններով, այլև նաև նրանով, որ արքունիքի հայ երևելի գործիչներին պաշտոնից արձակեց և նրանց փոխարինեց հայատյաց բարոններով։ Այսպես օրինակ, նա Մատթեոս դր Շապպին ամուսնացրեց հայոց նախկին թագավոր Կոստանդին Գ-ի կնոջ՝ Մարիամի հետ և նրան այնքան մեծացրեց, որ պատմիչի խոսքերով «մինչև ի նմին իսկ աւուր թագադրութեանն՝ ինքնին իւրով ձեռամբ արարեալ էր զնա ասպէտ»[80]։ Իսկ Ֆրանկ Սոհիէ Դուլկարտինին նշանակեց «ասպէտ իւրով»[81] և այլն։

Լևոնի այս վերաբերմունքը մեծ վրդովմունք առաջ բերեց հայոց արքունիքում և ժողովրդի մեջ։ Հայ ավագանին նպատակահարմար գտավ դաշն կնքել Եգիպտոսի սուլթանի հետ, քան թե ենթարկվել ֆրանկ իշխանի։ Հայ գործիչները Մարիամ թագուհու եղբոր Աշոտ Նղրցու միջոցով խնդրագիր ներկայացրին Եգիպտոսի սուլթան Մելիք Աշրաֆին, որ նա օգնի Կիլիկյան Հայաստանին։

1375 թ. հուլիսի 5-ին Մելիք Աշրաֆը Բեքրի հրամանատարությամբ 12 հազարանոց մի բանակ ուղարկեց պաշարելու Սիսը։ Նա, որպես օգնություն,

77 Հովհան Դարդել, էջ 113։
78 Նույն տեղում, էջ 112։
79 «Ֆրանսիական զնդաւ»,— գրում է Դարդելը՝ տե՛ս նույն տեղում, էջ 100։
80 Նույն տեղում, էջ 130,
81 Նույն տեղում, էջ 115։

Կիլիկիա ուղարկեց նաև Հալեպի էմիր Սեյֆեդդինին՝ հինգ հազարանոց մի ջոկատով։

Հայ ավագանին բաժանվեց երկու հակադիր հոսանքների՝ ունիթորների, որոնք համախմբվելով թագավորի շուրջը ղեկավարվում էին Կիպրոսի թագավորության և պապերի ցուցումներով, և հայրենասեր իշխանների, որոնք հայոց կաթողիկոսի գլխավորությամբ և եգիպտացիների օգնությամբ ցանկանում էին երկիրը փրկել պապի գործակալից և նրա վարձկան զինվորների ավերումներից։

Լևոն Ե-ի հակառակորդներից մեկը Վահրամ զորավարն էր, որին Հովհան Դարդելը «դավաճան» է անվանում։ Նա ընդհանրապես «արք դաւաճանք և մատնիչք»[82] է անվանում բոլոր նրանց, ովքեր դեմ էին թագավորին, անգամ Սսի բնակիչներին, որոնք չէին ցանկանում «զի կացցէ քաղաքն ի ձեռս քրիստոնէից»[83], ըստ որում «քրիստոնէից» ասելով նա հասկանում է կաթոլիկներին։

Հայրենասեր իշխանները դիմում են ամեն միջոցի՝ Լևոնի վարձկան զորքերը երկրից դուրս քշելու համար։ Ինքը՝ Հովհան Դարդելը չի ժխտում, որ հայ զինվորները «յորոց յաշտարակին էին՝ ոմանք ձգէին պարանօք ի վեր զթուրքս և զսարակինոսս»[84]։ Ի վերջո հայ ավագանին Լևոն Ե թագավորին ձերբակալում ու հանձնում է արաբներին։ 1375 թ. ապրիլի 22-ին Հալեպի կուսակալ էմիր Ըշկթիմուրը գերված Լևոն Ե-ին տարավ Հալեպ, իսկ հուլիսի 9-ին՝ Կահիրե։

Դրանից հետո Կիլիկյան Հայաստանում Եգիպտոսի կառավարությունը նշանակեց իր կուսակալին, որը երկիրը կառավարեց ընդամենը վեց ամիս։ 1376 թվականից սկսած Հայոց թագավորությունը անցնում է Կոստանդին Գ-ի Թոռ Կոստանդին զորավարին, որը սերված էր Հեթումյան տոհմից և երկիրը կառավարեց մինչև 1424 թ.։

Կան վկայություններ, որ դեռ 1496 թ. եղել է ինչ որ մի Օշին թագավոր։ Այդ մասին մի հիշատակարանում ասված է «ՌՆՂԶ (1496 թ.) զայսմ ամի նահատակեցաւ Հռոմկլայեցի Թորոս, որդի թագաւորին Օշնոյ»[85]։ Չնայած այս ուղղակի վկայությանը, այնուամենայնիվ գտնում ենք, որ 1496 թ. Կիլիկիայում գոյություն չուներ հայկական միասնական կենտրոնական թագավորական իշխանություն։ Եթե առանձին իշխաններ իրենց թագավոր էին հռչակում, դա դեռ չի նշանակում, որ նա կարող էր հայկական թագավոր ճանաչվել։ Ինչպես հայտնի է, Կոստանդինից հետո, այսինքն 1424 թ. Կիլիկիայում սկսվում է մասսայական գաղթը։ Ասլի Բեկի գլխավորությամբ հազարավոր հայ ընտանիքներ դաղթեցին հայոց մայրաքաղաք Սսից։

Այսպիսով, ինչպես հայ մատենագիրների[86], այնպես էլ օտար[87] և հայ[88]

---

82 Նույն տեղում, էջ 116։

83 Նույն տեղում։

84 Նույն տեղում, էջ 137։

85 Այդ Օշին թագավորի մասին խոսվում է Երուսաղեմի ս. Հակոբ վանքի մատենադարանում պահպանված մի ժամանակագրության մեջ։ («Բանբեր Մատենադարանի», № 9, 1969, էջ 273)։

86 Սամուել Անեցի, նշվ. աշխ., էջ 140։

87 Տե՛ս Rüdt-Collenberg, նշվ. աշխ., էջ 48։

88 Ա. Ալպոյաջյան, Պատմութիւն հայ գաղթականութեան. Կահիրե, 1955, հ. Բ, էջ 547։

պատմարանների հրապարակած փաստերից մենք եզրակացնում ենք, որ Կիլիկյան Հայաստանի պետականության կործանումը տեղի է ունեցել ոչ թե Լևոն Ե Լուզինյանին գերելու տարվանից, այսինքն 1375 թ., ինչպես ընդունված է հայագիտության մեջ, այլ շատ ավելի ուշ, այն է 1424 թ.:

К ВОПРОСУ О ПАДЕНИИ КИЛИКИЙСКОГО АРМЯНСКОГО ГОСУДАРСТВА

А. Г. ГАЛСТЯН
Доктор исторических наук

Резюме

В армянской исторической литературе существует мнение о том, что во второй половине XIV в. Киликийским армянским государством управляли не армянские, а пять латинских королей французского происхождения.

Эти пять королей якобы были надеждой всех христиан, в том числе армян на Ближнем Востоке.

Эта ложная концепция была создана историками римской церкви и армянскими католиками-униатами с политической целью.

На основании изучения исторических памятников, мы пришли к выводу, что династия Лузиньянов в Киликийской Армении не обосновалась. Трон армянского государства почти два века подряд находился в руках армянских царей — выходцев из рода Гетумидов, за исключением ставленника кипрского короля Гвидона Лузиньяна, который царствовал в Киликийской Армении всего два года. Из-за этой реакционной политики армянская знать убила его. Царствование Гвидона в истории Киликийского армянского государства носит эпизодический характер. Что касается Левона V, то он царствовал всего три месяца и хотел присоединить армянское государство к Кипрскому королевству с целью организации новых крестовых походов, за что армянская знать изгнала его за пределы Киликийской Армении.

Таким образом, после изгнания Левона V Лузиньяна, француза по происхождению, армянское государство продолжало сохранять свою самостоятельность не до 1375 года, как принято считать в арменистике, а до 1424 года. Правителем Киликийской Армении был Константин Гетумян, который правил страной с 1376 по 1424 год, после чего началась эмиграция части армян из Киликии.